

ՀՀ Արդարադատության Նախարարության Քրեակատարողական
Հիմնարկներում և Մարմիններում Հասարակական Վերահսկողություն
Իրականացնող Հասարակական Դիտորդների Խումբ

Հետազոտություն

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ
ազատման համակարգի
առանձնահատկությունները Հայաստանի
Հանրապետությունում

Փորձագետ՝ Հասմիկ Հարությունյան

Հետազոտության գնահատումն իրականացվել է փաստաբան

Հայկ Ալունյանի կողմից

Սույն ուսումնասիրությունում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական Խումբն է: Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական Խումբը: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստանի կամ Խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն ուսումնասիրության բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստանի տեսակետներին: Սույն ուսումնասիրության թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստանի ֆինանսական օժանդակության շնորհիվ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը Հայաստանում	4
Օրենսդրական հիմքեր	5
Համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքն ու որոշում կայացնելու ընթացակարգը	7
Առկա խնդիրները	11
Պայմանական վաղաժամկետ ազատման նպատակային նշանակությունը	24
Համակարգի դերը քրեակատարողական հիմնարկների ներքին կարգապահության ապահովման գործում	26
Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն	28
Միջազգային ստանդարտներ: համեմատական վերլուծություն պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ միջազգային ստանդարտների և ՀՀ-ում գործող համակարգի միջև	30
Միջազգային լավագույն փորձի ներկայացում	38
Վերջաբան	43
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	44

Նախաբան

Դատապարտյալի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորությունը նրա իրավական կարգավիճակի կարևոր բաղադրիչներից մեկն է, որի համար անհրաժեշտ են ինչպես օրենսդրական հիմքեր, այնպես էլ պրակտիկ կիրառելիության մեխանիզմներ: Ներկայումս ՀՀ-ում պայմանական վաղաժամկետ ազատման հարցը նախատեսված է ինչպես քրեական և քրեակատարողական օրենսդրությամբ, այնպես էլ ՀՀ Կառավարության որոշմամբ ու Նախագահի հրամանագրով: Նախատեսված կարգավորումներն ու օրենսդրական հիմքերը կարծես թե բավարար լծակներ են համակարգը աշխատեցնելու համար, մինչդեռ գործնականում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգում նկատելի են բազմաթիվ թերություններ, ինչով պայմանավորված համակարգը վերանայման կարիք ունի: Սա է պատճառը, որ Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին պայմանական վաղաժամկետ ազատվողների թիվը ենթարկվել է կտրուկ նվազման: Ինչն էլ, իր հերթին, բացատրվում է մի շարք հանգամանքներով, որոնցից է, օրինակ, գործող համակարգի բարդեցված կառուցվածքը, պատասխանատու մարմինների ոչ կոմպետենտությունը, այն է՝ ռիսկեր գնահատելու համար բավարար մասնագիտական կարողությունների բացակայությունը, օրենքների անհստակությունը, գործընթացին մասնակացող մարմինների գործողությունների անկանխատեսելիությունը, կայացվող որոշումների հիմքում դրվող ոչ իրատեսական չափորոշիչները, ինչով պայմանավորված էլ կայացված որոշումները չեն հիմնավորվում: Արդյունքում, ներկայումս ստեղծվել է իրավիճակ, որի պարագայում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը չի ծառայում իր նպատակին:

Սույն հետազոտությունը նպատակ է հետապնդում ներկայացնել ներկայումս ՀՀ-ում պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի օրենսդրական հիմքերն ու կարգավորումները, գոյություն ունեցող միջազգային ստանդարտներն ու լավագույն փորձը: Վերջիններիս և ՀՀ-ում նախատեսված համակարգի համեմատական վերլուծությունը վեր կհանի գործող խնդիրներն ու դրանց պատճառները՝ հնարավոր լուծումներ առաջարկելու մտադրությամբ:

Պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը Հայաստանում

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ընթացող դատաիրավական ոլորտի հիմնախնդիրների ու դրանով պայմանավորված բարեփոխումների մեջ կենտրոնական տեղ զբաղեցնող հարցերից մեկը վերաբերվում է պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի տեսական և պրակտիկ խնդիրներին: Սա է պատճառը, որ ինչպես մի շարք իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ, այնպես էլ պետական ապարատի իրավասու մարմինները քննարկման են բարձրացրել վերոնշյալ համակարգի խնդիրներն ու համապատասխան փոփոխությունները: Ինչնիցե, ներկա դրությամբ համակարգը շարունակում է գործել իրավական և գործնական խնդիրների համակցությամբ, ինչի արդյունքում դեռևս անիրատեսական է ինչպես համակարգի նպատակային նշանակությունը, այնպես էլ դատապարտված անձանց համապատասխան իրավունքների իրականացումը:

Առկա խնդիրները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- Օրենսդրական կարգավորման թերություններ
- Համապատասխան որոշումը կայացնելու համար իրավասու մարմինների մոտ կոռուպցիոն ռիսկերի առկայություն ու համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքի արհեստական բարդացում
- Որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինների մասնագիտական ոչ բավարար կոմպետենտություն
- Որոշում կայացնելու ընթացակարգի հստակ չափանիշների բացակայություն

- Կայացված որոշման համար բողոքարկման արդյունավետ մեխանիզմի բացակայություն

Օրենսդրական հիմքեր

Ներկայումս ՀՀ իրավական համակարգում գործող պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի հետ կապված հարցերը իրենց կարգավորումն են գտել հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք
- ՀՀ Քրեական Օրենսգիրք
- ՀՀ Քրեական Դատավարության Օրենսգիրք
- ՀՀ Կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշում
- ՀՀ Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագիր
- «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 30.05.2008 թվականի թիվ 44-Ն հրաման

Այսպես, ՀՀ Քրեակատարողական օրենսգրքով սահմանված են պատժից ազատելու ընդհանուր հիմքերը, որոնց մեջ ներառված է նաև պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը¹: Իսկ ահա պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի ներքո նույն օրենսգրքով նախատեսվում են ինչպես դրա իրականացման պայմաններն ու կարգը, այնպես էլ ազատված անձանց իրավական կարգավիճակը և իրականացվող վերահսկողության կարգը: Օրենսգրքով նախատեսված պայմաններից կենտրոնականը վերաբերվում է նշանակված պատժի՝ սահմանված նվազագույն ժամկետը կրելուն: Վերջինս իր հերթին սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքով:

¹ ՀՀ Քրեակատարողական Օրենսգիրք, Հոդված 113

ՀՀ Քրեական օրենսգրքի հոդված 76-ով սահմանված են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատ արձակելու ընդհանուր հիմքերը²։ Մասնավորապես, համաձայն հոդվածի առաջին մասի *“Ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի..”*։ Ըստ այդմ, *“Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է”*

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը.

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը.

3) առանձնապես ծանր հանցագործության, բացառությամբ սույն մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործությունների համար, ինչպես նաև նախկինում պայմանական վաղաժամկետ ազատված անձի (եթե պայմանական վաղաժամկետ ազատումը վերացվել է սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված հիմքերով) նկատմամբ նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը..”։ Ինչ վերաբերվում է ազատման պայմաններին, ապա դրանց մեջ կենտրոնական են նշանակված պատժի որոշակի մասը կրած լինելու և պատճառված վնասը հատուցած լինելու հանգամանքները։

Քրեակատարողական օրենսգրքով սահմանված պատիժը կատարող հիմնարկի կողմից ազատման հարցը քննարկելու կարգի պարագայում արդեն հղում կատարվում է ՀՀ Կառավարության համապատասխան որոշմանը։ Իսկ ահա պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն տալու իրավասությունը դրված է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի վրա, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով։ Հարկ է նշել

² ՀՀ Քրեական Օրենսգիրք, Հոդված 76

սակայն, որ հանձնաժողովի կողմից որոշումներ ընդունելու չափանիշները որևէ կերպ սահմանված չեն:

Համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքն ու որոշում կայացնելու ընթացակարգը

Կառավարության N 1304-Ն որոշման³ համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման գործընթացն իրականացնում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝ հանձնաժողովային կարգով:

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման գործընթացն իրականացնելու նպատակով քրեակատարողական հիմնարկում ստեղծվում է վարչական հանձնաժողով, որը պետք է ունենա հետևյալ կազմը՝

- 1) հանձնաժողովի նախագահ՝ քրեակատարողական հիմնարկի պետ,
- 2) հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ (սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները համակարգող),
- 3) հանձնաժողովի քարտուղար՝ քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման ստորաբաժանման ղեկավար,
- 4) անդամներ՝
 - ա) քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալներ,
 - բ) քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանման ղեկավար,

³ ՀՀ Կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի համար 1304-Ն որոշում Դատապարտյալին Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը հաստատելու մասին

զ) քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների բժշկական սպասարկման ստորաբաժանման ղեկավար,

դ) քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման ստորաբաժանման ղեկավար:

Պատժի ժամկետի՝ քրեական օրենսգրքով սահմանված և վերը ներկայացված մասը լրանալու դեպքում վաղաժամկետ ազատելու կամ ավելի մեղմ պատժատեսակ նշանակելու հարցերը քննարկելու համար ստեղծված վարչական հանձնաժողովը մեկամսյա ժամկետում հրավիրում է նիստ: Դատապարտյալը ցանկության դեպքում հնարավորություն ունի մասնակցել հարցի քննարկմանը: Նիստի արդյունքում հանձնաժողովը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ,

բ) դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին միջնորդագիր չներկայացնելու վերաբերյալ,

գ) դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ հարցի քննարկումը *հետաձգելու* վերաբերյալ: Սույն որոշումները պետք է լինեն պատճառաբանված և պարունակեն դրանք բողոքարկելու կարգն ու պայմանները:

Նիստի արդյունքներն ու կայացված որոշումը անհապաղ պետք է ներկայացվեն դատապարտյալին, իսկ նիստի վերաբերյալ կազմված արձանագրությունը կցվում է դատապարտյալի անձնական գործին:

Այն դեպքում, երբ միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ վարչական հանձնաժողովն ընդունում է վերը ներկայացված «ա» ենթակետով նախատեսված որոշում, վարչական հանձնաժողովի նախագահը որոշումը եռօրյա ժամկետում ուղարկում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ

պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովին (այսուհետ՝ անկախ հանձնաժողով)՝ հավանություն ստանալու նպատակով:

Անկախ հանձնաժողովի՝ հավանություն չտալու մասին որոշումն ստանալու դեպքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից կազմվում է դրա մասին տեղեկանք, որը կրկին ստորագրությամբ դատապարտյալին եռօրյա ժամկետում ծանոթացնելուց հետո կցվում է նրա անձնական գործին:

Անկախ հանձնաժողովի՝ հարցին հավանություն տալու մասին որոշումը վարչական հանձնաժողովի կողմից միջնորդագրի տեսքով ներկայացվում է դատարան՝ վերջնական որոշման նպատակով:

ՀՀ Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրի համաձայն միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմառի ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն տալու կամ չտալու նպատակով ստեղծվում են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովներ, որոնց կազմերում ընդգրկվում են համապատասխան գերատեսչությունների և հասարակության ներկայացուցիչներ⁴:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դատապարտյալի վերաբերյալ վաղաժամկետ ազատման մասին որոշում կայացնելուց հետո եռօրյա ժամկետում համապատասխան միջնորդագիր է ներկայացնում անկախ հանձնաժողովին: Անկախ հանձնաժողովը իր հերթին նախապատրաստում է նիստի օրակարգը և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր ամսվա 5-րդ օրն այն առաքում հանձնաժողովի անդամներին ու համապատասխան քրեակատարողական հիմնարկին:

Որոշման ընդունման գործընթացը ընթացակարգային առումով ունի հետևյալ պատկերը: Հանձնաժողովի նիստն սկսվելուց անմիջապես հետո հանձնաժողովի

⁴ ՀՀ Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագիր

անդամներին բաժանվում է քվեաթերթիկ, որում, ըստ օրակարգային հարցերի հերթականության, ընդգրկվում են նիստի օրակարգի բոլոր դատապարտյալների անուն-ազգանունները: Քվեաթերթիկում յուրաքանչյուր դատապարտյալի անուն-ազգանունից հետո գրվում են «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյուններով: Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն տալու կամ չտալու վերաբերյալ որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ գաղտնի քվեարկությամբ: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գաղտնի քվեարկության ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք և պետք է քվեարկի պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն տալուն դեմ կամ կողմ:

Ձայների հավասարության դեպքում համարվում է, որ հանձնաժողովը քվեարկել է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն տալուն կողմ:

Քվեարկության արդյունքների հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշումներ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, միջնորդագիր ներկայացնելու վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշմանը հավանություն տալու կամ չտալու մասին:

Որոշումն ընդունելուց հետո ոչ ուշ, քան հաջորդ օրն այն ուղարկվում է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմ:

Հատկանշական է, որ հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները կայացվել են հրամանագրով նախատեսված կարգի խախտմամբ:

Վերը ներկայացվածը թույլ է տալիս փաստել, որ ներկայումս վաղաժամկետ ազատման գործող համակարգը իր օրենսդրական հիմքերով և գործող ընթացակարգով բավականին բարդեցված է, ինչը, ինչ խոսք բացասաբար է անդրադառնում համակարգի պրակտիկ գործունեության վրա:

Առկա խնդիրները

Այսպես, քրեական օրենսգրքի համապատասխան դրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազատման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է դատարանին, մինչդեռ նույն հարցի քննարկման ընթացակարգում ընդգրկված են այլ մարմիններ ևս: Խոսքը վերաբերվում է մասնավորապես վերը ներկայացված վարչական հանձնաժողովներին և անկախ հանձնաժողովին, որոնց լիազորությունների, ինչպես նաև հայեցողությունների շրջանակը բավականին լայն է, մինչդեռ ժամանակ նրանց կայացրած որոշումները պատճառաբանված և հիմնավորված չեն: Անկախ հանձնաժողովի կայացրած որոշումը բողոքարկել հնարավոր է միայն Նախագահի հրամանագրով նախատեսված կարգի խախտման դեպքում: Սա նշանակում է, որ եռաստիճան ընթացակարգի արդեն իսկ նախնական փուլում խախտվում են դատապարտյալի լսված լինելու ու դատական բողոքարկման իրավունքները: Այս առումով անհրաժեշտ է նախ վերանայել ու հստակեցնել վարչական հանձնաժողովների օրենսդրական հիմքերը և վերացնել վերջնական ու չհիմնավորված որոշումներ ընդունելու հնարավորությունը:

Վարչակազմի հետ կապված մեկ այլ օրենսդրական խնդիր վերաբերվում է նրա կողմից կայացվող որոշումների հիմքում դրվող հանգամանքներին: Այսպես, ընդհանուր կանոնի համաձայն վարչակազմը որոշում կայացնում է տվյալ դատապարտյալի անձը բնութագրող տվյալների հիման վրա, որոնք նշվում են դատապարտյալի անձնական գործում: Մինչդեռ, որոշում կայացնելիս պետք է հիմք ընդունել նաև անձի ուղղման վերաբերյալ *մասնագիտական կարծիքները*, որոնք պետք է տրամադրվեն պարբերական կտրվածքով և իրապես գնահատեն դատապարտյալի ուղղման հնարավորությունը⁵:

Անդրադառնալով անկախ հանձնաժողովների գոյությանն ու դրանց հետ կապված խնդիրներին անհրաժեշտ է քննարկման ենթարկել նաև ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածը: Հոդված 55-ով նախատեսվում են մասնավորապես հանրապետության նախագահի գործառույթներն ու լիազորությունները: Անկախ

⁵ Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հիմնախնդիրները Հայաստանում: Հիմնախնդիրներ և զարգացման ուղիներ, Քաղաքացիական Հասարակության Բնասիտուտ, 2012

հանձնաժողովների՝ նախագահի հրամանագրով ստեղծելու հնարավորությունը հնարավոր է դիտարկել միայն նույն հոդվածի 6-րդ կետի ներքո: Վերջինիս համաձայն՝ նախագահը «կազմավորում է ազգային անվտանգության խորհուրդը և նախագահում այն, կարող է կազմավորել խորհրդակցական այլ մարմիններ»: Այստեղ սակայն հարց է ծագում, արդյոք անկախ հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, եթե նրա կայացրած որոշումները հիմնականում վերջնական են և որոշիչ նշանակությամբ: Հատկանշական է, որ նույնիսկ միջազգային կազմակերպություններում ստեղծվող խորհրդակցական մարմինները իրենց բնույթով որոշում ընդունող մարմիններն չեն, այլ միայն կարծիք և առաջարկություն են հայտնում որոշակի հարցերի շուրջ:

Բացի այդ, նախագահի կողմից ստեղծվող անկախ հանձնաժողովի կողմից կայացված որոշումները չեն ներկայացվում նախագահի հաստատմանը, ինչը կրկին փաստում է, որ անկախ հանձնաժողովը խորհրդակցական մարմին չէ և հետևաբար ներկայիս ձևավորման իրավական հիմքը սխալ է:

Նույնիսկ եթե ընդունենք, որ անկախ հանձնաժողովների՝ նախագահի հրամանագրով ստեղծելը հակասահմանադրական չէ, ապա անխուսափելիորեն խնդիր է առաջացնում այդ հանձնաժողովի գործունեությունը: Սա իր հերթին բացատրվում է նրանով, որ հանձնաժողովները կազմված են մեծամասամբ պետական ապարատի ներկայացուցիչներից, ինչը *բացառում է նրանց անկախությունն ու նվազեցնում գործունեության արդյունավետությունը*: Քանզի նման անդամները, իրենց պաշտոնից ելնելով, անկախ չեն կարող լինել: Սա իր հերթին հանգեցնում է մեկ այլ խնդրի, որը արտահայտվում է կոռուպցիոն ռիսկերի տեսքով:

Խոսելով անկախ հանձնաժողովի գործունեության մասին, չի կարելի ուշադրություն չդարձնել հետևյալ հանգամանքներին:

- Ինչպես արդեն նշվեց անկախ հանձնաժողովի կազմում ձևավորվում է երկու անդամից բաղկացած ենթահանձնաժողով, որը այցելում է համապատասխան դատապարտյալին, զրուցում և ծանոթանում վերջինիս գործին ու կարծիք կազմում: Այդ երկու անդամների կողմից տրամադրած տեղեկության հիման վրա անկախ հանձնաժողովը հետագայում որոշում է

կայացնում ազատման վերաբերյալ: Ողջամիտ հարց է ծագում, թե արդյոք երկու անդամի դիտարկման արդյունքում անկախ հանձնաժողովի մնացած անդամների համար անուղղակի ծանոթության ու երկրորդական աղբյուրի միջոցով ստացած ինֆորմացիան բավարար և օբյեկտիվ է անձի ճակատագրի մասին որոշում կայացնելու համար

- Ավելին, անդամները, ովքեր անձի վարքագծի փոփոխությունն ու ուղղման հնարավորությունն են գնահատում, պետք է որոշակի խիստ հմտությունների տիրապետեն ու համապատասխան մասնագիտացում ունենան, մինչդեռ գոյություն ունեցող անկախ հանձնաժողովներում նման անդամները բացակայում են:

Կարող ենք փաստել, որ ներկայումս անկախ հանձնաժողովների առկայությունը ձևավորման հիմքով, գործունեության ընթացակարգով և կազմով միայն խնդիրներ է առաջացնում և բացառում է պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի արդյունավետ իրականացումը:

Ներկայացվածի առնչությամբ տեղին է հիշատակել ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-733 որոշումը: Վերջինիս համաձայն՝

« 5. Մարդասիրության սկզբունքի դրսևորման ձևերից է նաև դատապարտյալին պատժից ազատելու քրեաիրավական ինստիտուտը: Այդ ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ հանցագործության համար դատապարտված անձը, քրեական օրենքով նախատեսված հիմքերով, կարող է դատարանի կողմից փաստացիորեն ազատվել պատժի հետագա կրումից: Պատժից ազատելու համար նյութական հիմք է հանդիսանում պատիժը կրելու աննպատակահարմարությունը կամ անհնարինությունը, հաշվի առնելով տվյալ դատապարտյալի՝ հանրորեն վտանգավոր լինելու հանգամանքի վերացումը, դատապարտյալի առողջական վիճակի վատթարացման փաստը կամ քրեական իրավունքի փոփոխությունը: Պատժից ազատելու ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ թույլ տալով անտեսել քրեական հարկադրանքի միջոցները, խթանում է դատապարտյալի վերադաստիարակումը, նպաստում է նրա ընտելացմանն իրավակարգի պահանջներին, սոցիալական վարքագծի կանոններին, ինչպես նաև բացառում է պատժի կիրառումն այն դեպքերում, երբ պատժի կիրառման նպատակներին հասնելը դառնում է ոչ իրական:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ, ի տարբերություն պատժից ազատելու մնացած ձևերի, պատժից ազատելու խնդրո առարկա ձևն իր բնույթով հանդիսանում է պայմանական, քանի որ պատժից ազատվող դատապարտյալը գտնվում է վերահսկողության ներքո, նրա վրա դրվում են որոշակի պարտականություններ, որոնք չկատարելու դեպքում դատարանը կարող է որոշում կայացնել պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին:

(...)

7. ՀՀ գործող օրենսդրության, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 70 և 76 հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդվածի դրույթների վերլուծությունը վկայում է, որ

(...)

զ) Հայաստանի Հանրապետությունը վաղաժամկետ ազատելու հարցը որոշելու համար որդեգրել է, այսպես կոչված, հայեցողական ազատման համակարգը, որն առկա է նաև եվրոպական շատ երկրներում: Այդ համակարգի բնորոշ առանձնահատկություններից ելնելով է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434, 437, 438 հոդվածներով, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114, 115 եւ 115¹ հոդվածներով, ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշմամբ, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2006թ. հուլիսի 31-ի թիվ ՆՀ-163-Ն հրամանագրով սահմանվել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգերը:

8. Պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականը պարունակում է մի շարք սկզբունքային դրույթներ, որոնք էական նշանակություն ունեն իրավական պետությունում պայմանական վաղաժամկետ ազատման այս կամ այն մոդելի ընտրության հարցում: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս բազմաթիվ այլ երկրների, որդեգրել է «հայեցողական ազատման» համակարգը, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ համաձայն վերոհիշյալ Հանձնարարականի՝ հայեցողական ազատման համակարգի դեպքում.

ա) նվազագույն ժամկետը, որը բանտարկյալները պետք է կրեն պայմանական վաղաժամկետ ազատվելուն ենթակա լինելու համար, պետք է սահմանված լինի օրենքով,

բ) պետք է ձգտել որոշումը կայացնել բանտարկյալի կողմից նվազագույն ժամկետը կրելուց հետո որքան հնարավոր է շուտ,

գ) պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները պետք է լինեն պարզորոշ և հստակ: Դրանք պետք է լինեն նաև իրական՝ այն իմաստով, որ պետք է

հաշվի առնեն բանտարկյալների անձը, սոցիալական և տնտեսական հանգամանքները, ինչպես նաև վերաբնակեցման ծրագրերի առկայությունը,

դ) պայմանական վաղաժամկետ ազատելուց հետո աշխատանքի հնարավորությունների բացակայությունը կամ մշտական ապրելավայր ունենալու բացակայության հանգամանքը չպետք է հիմք հանդիսանան այն մերժելու կամ հետաձգելու համար,

ե) պայմանական վաղաժամկետ ազատելու չափանիշները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի ազատման թույլտվություն տրվի բոլոր այն բանտարկյալներին, որոնք համապատասխանում են օրինապահ քաղաքացիներ դառնալու նվազագույն երաշխիքներին: Միաժամանակ, իշխանությունները պարտավոր են ցույց տալ, որ բանտարկյալը չի համապատասխանում այդ չափանիշներին,

զ) եթե որոշում կայացնող մարմինը որոշում է մերժել պայմանական վաղաժամկետ ազատելը, այն պետք է սահմանի հարցը վերանայելու օր: Բոլոր դեպքերում, բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան կրկին դիմել որոշում կայացնող մարմնին՝ այն պահից, երբ իրենց իրավիճակն էականորեն փոխվել է հոգուտ իրենց:

ՀՀ գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, պարզորոշ ու հստակ սահմանված չեն պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների, քրեական դատավարության օրենսգրքի ու քրեակատարողական օրենսգրքի՝ քննության առարկա դրույթների ու դրանց փոփոխությունների, համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ իրավաչափ կլիներ, որպեսզի պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացը (այդ թվում՝ ժամկետները, չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը եւ հայեցական լիազորությունների շրջանակը)՝ ՀՀ կողմից որդեգրված կոնկրետ կարգի շրջանակներում, առավել հստակ սահմանվեր օրենսդրությամբ:

(...)

10. (...) Անկախ հանձնաժողովի գործունեության կարգը սահմանող՝ ՀՀ Նախագահի հրամանագիրը (31.07.2006թ. թիվ ՆՀ-163-Ն) կարող է բողոքարկման առարկա լինել՝ դրա թե՛ օրենքին եւ թե՛ Սահմանադրությանը համապատասխան լինելու տեսանկյունից: Այդ հանձնաժողովը որեւէ հարց չի կարող քննության առարկա դարձնել, եթե չկա պատիժը կատարող հիմնարկի վարչական հանձնաժողովի որոշումը (այն ստեղծվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ ՀՀ կառավարության որոշմամբ): Վարչական հանձնաժողովի որոշումները դատական կարգով կարող են բողոքարկվել՝ ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասի: Փաստորեն, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ստեղծված անկախ հանձնաժողովը (այդ նորմի սահմանադրականությունը դիմող կողմը

չի վիճարկել) իրականացնում է բացառապես վարչական հանձնաժողովի նկատմամբ վերահսկողական լիազորություն: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորվել է նաև իրավակիրառական պրակտիկայով, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման խնդրով, օրենքով նախատեսված պատժամիջոցների իրավական նշանակությունը չիմաստազրկելու անհրաժեշտությամբ, երբ պայմանական վաղաժամկետ ազատումը դառնում է ձևական ու համատարած՝ առանց դրա իրավական նշանակության ու նպատակի հստակ երաշխավորման: Իսկ վերջինս անմիջականորեն առնչվում է նաև հասարակության անվտանգության և այլոց իրավունքների ու ազատությունների հարգման ու պաշտպանության խնդրին:

(...)Նման համակարգի կիրառման դեպքում հիմնական խնդիրներից է, որ տարբեր մարմինների որոշումների հնարավոր անհամապատասխանության հարցը լուծում ունենա: Տվյալ հարցին առնչվող ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ հնարավոր անհամաչափության խնդիրը կարող է միայն դատական կարգով իր լուծումն ստանալ, եթե նախապես օրենսդրորեն հստակեցված են այս հարցում տարբեր մարմինների լիազորություններն ու հայեցողության շրջանակները:

(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ստեղծված հանձնաժողովին առնչվող հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումը պետք է լինի, այլ նրա որոշումների՝ օրենսդրությանը համապատասխանելը վերահսկելը: ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի խմբերատիվ պահանջն է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»: Միայն դատարանը կարող է որոշել իրավական ակտը համապատասխանում է օրենքին, թե՛ ոչ: Սակայն դատարանը չի կարող իրացնել օրենքով անկախ հանձնաժողովին վերապահված լիազորությունը: Տվյալ պարագայում պետք է գործի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի օրենսդրական կարգավորման այն տրամաբանությունը, որ երբ անկախ հանձնաժողովն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, և դատարանը հանգում է այն հետևությանը, որ հանձնաժողովի հայեցողական լիազորություններն իրականացվել են օրենսդրությանը ոչ համապատասխան, ապա դատարանի վճռի եզրափակիչ մասը պետք է սահմանի հանձնաժողովի պատասխանատվությունը՝ իր որոշումն ընդունել կամ կատարել գործողություն՝ հիմք ունենալով դատարանի իրավական դիրքորոշումը և ապահովել կայացվող որոշման իրավաչափությունը՝ այն համապատասխանեցնելով օրենքի պահանջներին:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի վիճարկվող հոդվածում ամրագրված այն դրույթը, որը նախատեսում է պատիժը կրող հիմնարկի վարչակազմի որոշումները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, իսկ անկախ հանձնաժողովի որոշումների դատական բողոքարկման հնարավորություն նախատեսում է միայն այն դեպքերում, երբ այդ որոշումը կայացվել է ՀՀ Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ և բացառում է նաև այդ որոշման դատական կարգով բողոքարկումը, եթե այն հակասում է օրենքին, ոչ հետևողական լուծում է և չի երաշխավորում միջազգայնորեն ընդունված և ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կարգի արմատավորում ՀՀ իրավական համակարգում»:

Այս կապակցությամբ կարելի է հիշատակել նաև ՄԴ-ի վերը նշված որոշման կատարման վերաբերյալ վերլուծությունները, որոնք պարունակվում են « Սահմանադրական դատարանի որոշումների կատարման գործընթացը Հայաստանում» հետազոտման մեջ / հեղինակային խումբ՝ Հ. Ալումյան, Կ. Մեծլումյան, Տ. Հայրապետյան, Ա. Գրիգորյան, Երևան, «Աստղիկ», 2012/:

« ա) Որոշման⁶ կատարումը օրենսդիր իշխանության կողմից.

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխությունները կատարվել են որոշումն ընդունվելուց ավելի քան 15 ամիս անց՝ 20.05.2009 թվականի ՀՕ-129-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 27.06.2009 թվականին: Այս փաստը արդեն իսկ կարող է վկայել օրենսդրի կողմից Սահմանադրական դատարանի որոշման ոչ պատշաճ կատարման մասին:

Ավելին, թեև ՄԴ-Ո-733 որոշմամբ սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվեց քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված՝ անկախ հանձնաժողովի որոշումները դատական կարգով բողոքարկելու սահմանափակումը, ինչը նշանակում էր, որ նման սահմանափակումներն օրենսդրորեն պետք է հանվեին, Ազգային ժողովի կողմից այս կապակցությամբ կատարված օրենսդրական փոփոխությունները ևս մեկ անգամ՝ արդեն այլ խմբագրությամբ, մտցրեցին նման սահմանափակում: Այսպես, փոփոխությունների արդյունքում քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասը ստացավ հետևյալ բովանդակությունը.

«Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ

⁶ ՀՀ Սահմանադրական դատարան, որոշում ՄԴ-Ո-733

հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, բացառությամբ օրենքին հակասելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ ընդունվելու դեպքերի»:

Ինչպես կարելի է համոզվել այս փոփոխությունից, խմբագրված վիճակում օրենքը սահմանում է կանոն, ըստ որի՝ անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, ինչպես նաև այդ կանոնից բացառություններ, երբ որոշումները կարող են բողոքարկվել: Մինչդեռ Սահմանադրական դատարանի որոշումը առհասարակ բացառում էր բողոքարկման սահմանափակումները: Այսպիսով, տվյալ դեպքում ևս առկա է օրենսդրի կողմից Սահմանադրական դատարանի որոշման ուղղակի չկատարում:

Օրենսդրի կողմից պարզապես անտեսվել են ՄԴՈ-733 որոշման մեջ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, ՄԴ-ն նշել է՝ «Հ գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, պարզորոշ ու հստակ սահմանված չեն պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների, քրեական դատավարության օրենսգրքի ու քրեակատարողական օրենսգրքի՝ քննության առարկա դրույթների ու դրանց փոփոխությունների, համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ իրավաչափ կլինեք, որպեսզի պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացը (այդ թվում՝ ժամկետները, չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը և հայեցական լիազորությունների շրջանակը)՝ ՀՀ կողմից որդեգրված կոնկրետ կարգի շրջանակներում, առավել հստակ սահմանվեր օրենսդրությամբ»:

Չնայած դրա, մինչև այժմ (2001 թվականի սեպտեմբեր ամիս) օրենսդրորեն չեն սահմանվել այն չափանիշները, որոնք ենթակա են կիրառման անկախ հանձնաժողովների կողմից՝ պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելուն հավանություն տալու կամ չտալու մասին որոշում կայացնելիս: Նաև օրենսդրորեն սահմանված չէ այդ հանձնաժողովի գործունեության կարգը, հարցերի քննարկման և որոշումների ընդունման ընթացակարգը:

բ) Որոշման կատարումը դատարանների կողմից.

Հեղինակների մոտ չկան տվյալներ այն մասին, որ ՄԴՈ-733 որոշումից հետո դատարանները հրաժարվեն քննության առնել անկախ հանձնաժողովի որոշումների դեմ բերված բողոքները: Սակայն, ի խախտումն ՄԴՈ-733 որոշման, քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասում կատարված փոփոխությունը (տես՝ վերևում) ըստ

էութեան սահմանափակել է դատարանների լիազորությունները նման բողոքներով որոշում կայացնելիս: Հեղինակների կարծիքով, հենց դա է հիմնական պատճառը, որ դատապարտյալների նման բողոքարկումները մինչև օրս որևէ արդյունքի չեն բերել:

գ) Որոշման կատարումը գործադիր իշխանության կողմից.

Անկախ հանձնաժողովը, իրականում լինելով գործադիր իշխանության մաս (տես՝ այդ հանձնաժողովի ձևավորման սկզբունքները, կարգը և կազմը), իր գործունեության ընթացքում լիարժեք անտեսում է ՄԴՈ-733 որոշման իրավական հիմնավորումները: Մասնավորապես, մինչև այժմ (2011 թվականի սեպտեմբեր) որևէ տեղեկություն չկա այն մասին, թե ի՞նչ չափանիշներ է հաշվի առնում այդ հանձնաժողովը՝ պայմանական վաղաժամկետ ազատման համար դատարան դիմելուն հավանություն տալու կամ չտալու հարցը քննելիս: Հանձնաժողովի որոշումները գուրկ են որևէ պատճառաբանությունից և, բացի որոշումը կայացնելու ժամանակի, քննարկվող հարցի և հանձնաժողովի կազմի վերաբերյալ նշումներից, բովանդակում են միայն այն անձանց ցուցակը, որոնց պայմանական վաղաժամկետ ազատման համար հանձնաժողովը տվել է իր հավանությունը և այն անձանց ցուցակը, որոնց համար հանձնաժողովը հավանություն չի տվել:

ՀՀ փաստաբանների պալատի կողմից այդ հանձնաժողովներում առաջադրված անդամներից մեկը՝ պարոն Նիկոլայ Բաղդասարյանը իր դիմումի հիման վրա հետ է կանչվել Հանձնաժողովից: Ուշագրավ է ինչպես պարոն Բաղդասարյանի դիմումի հիմքերը, այնպես էլ՝ Փաստաբանների պալատի 10.04.2009 թվականի թիվ 8-րդ նիստի թիվ 8/5-L որոշման պատճառաբանությունները: Բերում ենք այդ որոշումը՝ որոշակի կրճատումներով.

«Նիկոլայ Յուրայի Բաղդասարյանը դիմում է ներկայացրել Պալատի նախագահին, որտեղ մասնավորապես նշել է, որ 26.08.2006 թվականին ուժի մեջ մտած՝ ՀՀ նախագահի ,Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին ՆՀ-163-Ն հրամանագրի թիվ 2 հավելվածի համաձայն Պալատի նախագահի առաջադրմամբ ինքը նշանակվել է «պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի» անդամ: Բազմիցս դժգոհություններ է հայտնել նշված հանձնաժողովի գործունեության վերաբերյալ, մասնավորապես, համաձայն վերը նշված հրամանագրի՝ հանձնաժողովի միայն երկու անդամներն են՝ ենթահանձնաժողովն է հանդիպում դատապարտյալի հետ և ծանոթանում նրա անձնական գործի հետ, իսկ մնացած վեց անդամները որոշում կայացնելիս միայն հաշվի են առնում այդ երկու անդամների կարծիքը, որը հաճախակի

լինում է սուբյեկտիվ: Բացի այդ, Նիկոլայ Բաղդասարյանն իր դիմումում նշում է, որ անկախ հանձնաժողովի գործունեությունը կարգավորող ներպետական օրենսդրությունը չի համապատասխանում Եվրոպայի խորհրդի նախարարների Կոմիտեի թիվ (2003) 22 Հանձնարարականին՝ պայմանական վաղաժամեւ ազատելու մասին: Նիկոլայ Բաղդասարյանն իր դիմումի եզրափակիչ մասում խնդրում է ետ կանչել իրեն անկախ հանձնաժողովի կազմից:

(...)

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամեւ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը սահմանվել է՝ 24 օգոստոսի 2006 թ. N 1304-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ:

05.02.2008 թ. ՀՀ Սահմանադրական դատարանը, քննության առնելով քաղաքացի Աշոտ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2006 թ. հունիսի 13-ին ընդունած՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի եւ 2004 թ. դեկտեմբերի 24-ին ընդունած՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի սահմանադրության համապատասխանության հարցը որոշել է.

«1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թ. հունիսի 13-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասը՝ անկախ հանձնաժողովի որոշումն օրենքին հակասելու դեպքում դատական կարգով բողոքարկելը սահմանափակելու մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6, 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածներին հակասող եւ անվավեր»:

(...) Խորհուրդը նույնպես մտահոգություն է հայտնում, որ օրենքով չսահմանելով պատժի պայմանական վաղաժամեւ ազատման ողջ գործընթացը՝ հստակ ժամկետները, պարզորոշ և հստակ չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը ու հայեցական լիազորությունների շրջանակը, հնարավորություն է ընձեռնվում չարաշահումների համար: Խորհուրդը ևս մեկ անգամ ցանկանում է ընդգծել, որ վերը նշված հարցերը պետք է կարգավորվեն միայն օրենքով, այլ ոչ ենթաօրենսդրական ակտերով:

Խորհուրդն ընդունում է, որ անկախ հանձնաժողովի անհրաժեշտությունը պայմանավորված է եղել իրավակիրառական պրակտիկայով, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման խնդրով, օրենքով նախատեսված պատժամիջոցների իրավական նշանակությունը չիմաստազրկելու անհրաժեշտությամբ, երբ պայմանական վաղաժամկետ ազատումը դառնում է ձևական ու համատարած՝ առանց դրա իրավական նշանակության ու նպատակի հստակ երաշխավորման: Իսկ վերջինս անմիջականորեն առնչվում է նաև հասարակության անվտանգության և այլոց իրավունքների ու ազատությունների հարգման ու պաշտպանության խնդրին: Սակայն, միաժամանակ Խորհուրդը փաստում է, որ անկախ հանձնաժողովը գործում է 2006 թվականի օգոստոս ամսից, իսկ այդ ժամանակահատվածը բավարար էր, որպեսզի պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացը համապատասխանեցվեր Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունած թիվ (2003) 22 հանձնարարականի վերը նշված պահանջներին: Հետևաբար, Խորհուրդը առաջարկում է որպես ժամանակավոր լուծում՝

1. օրենքով սահմանվեն պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացի ժամկետները,
2. օրենքով պարզորոշ և հստակ ամրագրվեն պատժի պայմանական վաղաժամկետ ազատման չափանիշները՝ հաշվի առնելով բանտարկյալների անձը, սոցիալական և տնտեսական հանգամանքները, ինչպես նաև վերաբնակեցման ծրագրերի առկայությունը,
3. օրենքով սահմանվի պատժի պայմանական վաղաժամկետ ազատման պետական մարմինների գործունեության կարգն ու հայեցական լիազորությունների շրջանակը,
4. օրենքով պարտադիր դարձվի դատապարտյալների մասնակցության իրավունքը անկախ հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև հնարավորություն ընձեռվի հանձնաժողովի բոլոր անդամներին ծանոթանալու դատապարտյալի անձնական գործին: Խորհուրդը նաև կարծիք է հայտնում, որ Հայաստանի համար պայմանական վաղաժամկետ ազատման սխալ մոդել է ընտրվել: ՀՀ Սահմանադրական դատարանն իր վերը նշված որոշման մեջ վկայակոչել է որպես նախադեպ՝ մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականին ընդունած՝ Լեզերն ընդդեմ Ֆրանսիայի վճիռը, որտեղ նշված է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում առկա է պայմանական վաղաժամկետ ազատման երեք հիմնական մոդել, այն է՝ հայեցողական համակարգ, պարտադիր ազատման համակարգ և խառը համակարգ:

Հայաստանում կիրառվող խառը համակարգի իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ այն լավագույնը չէ, հետևաբար, որպես վերջնական լուծում, կարծում ենք, անհրաժեշտ

է քննարկել նաև այլ մոդելներին՝ հայեցողական կամ պարտադիր ազատման համակարգին անցնելը:

Այսպիսով, Խորհուրդը՝

Կարևորելով ՀՀ Սահմանադրական դատարանի հետևյալ դիրքորոշումը, որ պատժից ազատելու քրեաիրավական ինստիտուտը մարդասիրության սկզբունքի դրսևորման ձևերից է (այդ ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ հանցագործության համար դատապարտված անձը, քրեական օրենքով նախատեսված հիմքերով, կարող է դատարանի կողմից փաստացիորեն ազատվել պատժի հետագա կրումից: Պատժից ազատելու համար նյութական հիմք է հանդիսանում պատիժը կրելու աննպատակահարմարությունը կամ անհնարիությունը, հաշվի առնելով տվյալ դատապարտյալի՝ հանրորեն վտանգավոր լինելու հանգամանքի վերացումը, դատապարտյալի առողջական վիճակի վատթարացման փաստը կամ քրեական իրավունքի փոփոխությունը),

Նկատի ունենալով կալանավայրերից դատապարտյալների կողմից ստացված բազմաթիվ բողոքները՝ կապված պատժի պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացի հետ, Հաշվի առնելով, որ պատժից ազատելու ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ այն խթանում է դատապարտյալի վերադաստիարակումը, նպաստում է նրա ընտելացմանն իրավակարգի պահանջներին, սոցիալական վարքագծի կանոններին, ինչպես նաև բացառում է պատժի կիրառումն այն դեպքերում, երբ պատժի կիրառման նպատակներին հասնելը դառնում է ոչ իրական:

Հաշվի առնելով, որ Հայաստանում էականորեն աճել է դատապարտյալների թիվը և միշտ չէ, որ կալանավորված անձանց համար ապահովվում է համապատասխան պայմաններ, ինչը ինքնին կարող է առաջացնել Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (4 նոյեմբերի 1950 թ. Հռոմ) 3-րդ հոդվածի խախտում (Տես՝ Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի գործը),

Հաշվի առնելով, որ սույն որոշման մեջ բարձրացված հարցերին անհրաժեշտ է տալ հրատապ լուծումներ, որոշեց՝

1. Դիմել ՀՀ նախագահին սույն որոշման պատճառաբանական մասում առաջարկվող հարցերի վերաբերյալ հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ,
2. Սույն հարցի կարևորությունը բարձրացնելու նպատակով անկախ հանձնաժողովներից ետ կանչել բոլոր փաստաբան անդամներին և առաջարկել Պալատի նախագահին դիմել ՀՀ Նախագահին խնդրանքով՝ դադարեցնելու անկախ հանձնաժողովներում փաստաբան անդամների լիազորությունները՝ մինչև սույն որոշման պատճառաբանական մասում առաջարկվող հարցերի վերաբերյալ լուծում տալը:»:

Փաստաբանների պալատի այս որոշման մեջ մատնանշված փաստերն ու վերլուծությունները վկայում են, որ թե օրենսդիր և թե գործադիր իշխանությունների կողմից անտեսված են մնում Սահմանադրական դատարանի վերը նշված որոշման պահանջները: Պետք է նաև նշել, որ Պալատի խորհրդի կողմից կայացված այս որոշումը նույնպես որևէ արդյունքի չբերեց⁷:»:

Ինչ վերաբերվում է ազատման գործընթացում դատարանի դերին, ապա վերջինս մտահոգության տեղիք է տալիս միայն մեկ առումով: Ըստ էության, դատապարտյալին վաղաժամկետ ազատման հարցի քննությունը դատարանի կողմից իրականացվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկում, արտագնա դատական նիստի տեսքով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, արտագնա դատական նիստերը, թեպետև բաց են հանրության համար, բայց հաշվի առնելով այն, որ անց են կացվում փակ հիմնարկում, հրապարակայնության առումով խնդիրներ են առաջացնում⁸: Արդյունքում, վաղաժամկետ ազատման նիստերը հասարակությանը անհասանելի են: Իսկ նիստերին այլ անձանց բացակայությունը նվազեցնում է դատարանի հաշվետվողականության ու աչալրջության աստիճանը:

Վաղաժամկետ ազատման ինստիտուտի հետ կապված մեկ այլ խնդիր առնչվում է տուժողին: Մասնավորապես, տուժողը դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում որևէ դերակատարություն չունի: Օրենքով նրան նույնիսկ պարտավոր էլ չեն տեղեկացնելու, որ նման հարց է քննության առնվում: Մինչդեռ քննարկվող խնդիրն ուղղակիորեն առնչվում է նրա օրինական շահերին: Ճիշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ նախադասության համաձայն, պատիժ կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտյալի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը, սակայն այս դեպքում օրենքը նկատի է ունենում նյութական վնասը հատուցված լինելու հանգամանքը, իսկ ինչ վերաբերվում է բարոյական վնասին, ապա այդ հանգամանքը առհասարակ հաշվի չի առնվում, քանզի ներպետական օրենսդրությամբ բարոյական վնասների դրամական հատուցում նախատեսված չէ: Ստացվում է, որ օրինակ, տուժողի կյանքի,

⁷ Տես՝ վերը նշված հետազոտության 86-103 էջերը:

⁸ «Արտագնա դատական նիստերի հրապարակայնությունը. Օրենսդրական և պրակտիկ խնդիրներ», Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԳ վերլուծություն, 2013

առողջության, սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում տուժողի նկատմամբ որևէ պարտավորություն դատապարտյալը չի կրում, մինչդեռ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում տուժողին պատճառված վնասի հատուցման հանգամանքը նշանակություն ունի: Ավելին, տուժողի մասնակցությունը գործընթացներին որևէ կերպ նախատեսված չէ նույնիսկ այն դեպքում, երբ տուժողին պատճառված վնասը հատուցած լինելը նշանակություն ունի դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման համար:

Պայմանական վաղաժամկետ ազատման նպատակային նշանակությունը

2003 թվականի Սեպտեմբերի 24-ին Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն ընդունեց Պայմանական ազատման վերաբերյալ հանձնարարական⁹, որի ընդունման որոշումը 2000 թվականի Բանտային գերբեռնվածության ու դատապարտյալների քանակի նվազեցման վերաբերյալ հանձնարարականի տրամաբանական շարունակությունն էր: Հանձնարարականների հաջորդականությունը և պայմանական ազատման վերաբերյալ հանձնարարականի բովանդակության ուսումնասիրությունը վկայում են այն մասին, որ վաղաժամկետ ազատման հիմնական և կենտրոնական նպատակներից մեկը քրեակատարողական հիմնարկների բեռնաթափումն է: Միևնույն ժամանակ, պայմանական վաղաժամկետ ազատումը նպատակ է հետապնդում դատապարտյալներին օգնել քրեակատարողական հիմնարկի կյանքից հասարակություն վերադառնալու հարցում՝ ազատությանը հաջորդող համապատասխան պայմանների և հսկողության միջոցով:

⁹ Recommendation (2003)22 of the Committee of Ministers to member States on conditional release, Committee of Minister, 2003

Դատապարտյալների վերաբերյալ ՄԱԿ-ի ստանդարտ նվազագույն կանոնների 60-րդ կանոնի համաձայն¹⁰ “մինչև պատժի համար սահմանված ժամկետի ավարտը ցանկալի է, որ պետությունները համապատասխան քայլեր ձեռնարկեն դատապարտյալի կողմից հասարակություն վերադառնալու համար: Քրեական գործից կախված, այս նպատակը կարելի է իրագործել նույն քրեակատարողական կամ այլ հիմնարկում կազմակերպվող համապատասխան ռեժիմի միջոցով կամ որոշակի հսկողության ներքո ազատ արձակմամբ, ինչը չպետք է վստահվի ոստիկանությանը և պետք է զուգորդվի արդյունավետ սոցիալական օգնությամբ”:

Նման կանոնով առաջնորդվելով՝ ներկայումս մի շարք երկրներ իրենց դատական համակարգում այնպիսի իրավական մեխանիզմներ են ներդրել, որոնք հնարավորություն են տալիս դատապարտյալներին ազատ արձակվել մինչև պատժի վերջնաժամկետը: Պլանավորված և կազմակերպված վաղաժամկետ ազատումը հասարակությանը հնարավորություն է տալիս ավելի պաշտպանված լինել, քանզի նվազեցնում է նախկին դատապարտյալների կողմից կրկին հանցագործություն կատարելու հնարավորությունը: Այդ իսկ պատճառով հաջողված վաղաժամկետ ազատման համակարգերը իրականացվում են քրեակատարողական հիմնարկում ազատմանը նախորդող համապատասխան ծրագրերի միջոցով ու դատապարտյալի նկատմամբ հսկողություն սահմանելով¹¹: Ընդհանուր առմամբ նման մոտեցումը նպատակ է հետապնդում նպաստել դատապարտյալի վերաինտեգրմանն ու վարքագծի հնարավորինս դրական փոփոխությանը:

Պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը վերոնշյալ նպատակներից բացի ներկայումս կարևորվում է մեկ այլ կարևոր հանգամանքի ապահովման առնչությամբ: Մասնավորապես, վաղաժամկետ ազատումը բանտերում դիտարկվում է որպես խթան՝ դատապարտյալների կողմից պատշաճ վարքագիծ և կարգապահություն ապահովելու համար: Դատապարտյալը, ով տեղեկացված է և գիտակցում է իր վարքագծի իրավական հետևանքները, ավելի օրինապահ է և բանտային ադմինիստրացիայի համար նվազ խնդիրներ ստեղծող: Հետևաբար,

¹⁰ Standard Minimum Rules for the Treatment of Prisoners, UN Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Geneva,

¹¹ Handbook for prison leaders, A basic training tool and curriculum for prison managers based on international standards and norms, United Nations Office on Drugs and Crime

պայմանական վաղաժամկետ ազատումը դիտարկվում է նաև որպես կարգապահության խթանիչ ու քրեակատարողական հիմնարկի ներքին հարաբերություններում որոշակիություն մտցնող գործոն:

Համակարգի դերը քրեակատարողական հիմնարկների ներքին կարգապահության ապահովման գործում

Ընդհանուր կանոնի համաձայն քրեակատարողական համակարգի արդյունավետ կառավարումը հիմնվում է մի շարք գործառույթների ու գործողությունների արդյունավետ իրականացման վրա: Վերջիններիցս են մասնավորապես մարդկային ռեսուրսների կառավարումը, ֆինանսական միջոցների կառավարումը, անվտանգության ապահովումը, կարգապահության ապահովումը և այլն: Սույն հետազոտության նպատակից ելնելով՝ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում կարգապահություն ապահովման հարցը: Կարգապահությունը ինքնին սերտորեն կապվում է մի շարք այլ գործառույթների և համակարգերի հետ, որոնց մեջ, ինչպես արդեն ներկայացվեց վերևում, իր ուրույն դերն ու նշանակությունը ունի վաղաժամկետ պայմանական ազատման համակարգը:

Այս առումով պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկները այն մարմիններն են, որոնք ընդամենը ապահովում են դատարանի կողմից նշանակված պատժի կատարումը, սակայն չեն ավելացնում նոր պատիժներ: Նման դիրքորոշմամբ բանտերի համար պարտադիր պայման է դառնում խստագույն կազմակերպվածության ու կարգուկանոնի առկայությունը: Քննարկվող կարգուկանոնն ու կարգապահությունը կախված է նաև բանտի ներսում գործող փոխադարձ վստահությունից և ապահովության զգացողությունից: Մյուս կողմից, դատապարտյալների կամ ադմինիստրացիայի մոտ վախի ու անապահովության զգացողությունը կվկայի միայն բանտային համակարգի վատ կառավարման մասին: Այդ իսկ պատճառով, ինչպես պահանջում են միջազգային նորմերը, բանտի ներսում ենթադրվող կարգապահությունը պահանջում է հստակորեն սահմանված և բացատրված սկզբունքներ և կանոններ: Ավելին, հաջողված կարգապահությունը հիմնվում է նաև տարբեր զսպիչների և հակակշիռների վրա՝ նպատակ ունենալով

կանխել չարաշահման դեպքերը: Նման հակակշռի օրինակ կարող է հանդիսանալ բողոքարկման ներքին մեխանիզմների առկայությունը:

Դատապարտյալների և բանտի վարչակազմի շահերի հավասարակշռումը ինքնին հանգեցնում է կարգապահության ամրապնդման: Իսկ դատապարտյալի կարգապահությունը առանձին վերցրած միտված է համապատասխանեցնել իր վարքագիծը սահմանված կանոններին ու նորմերին՝ ներառյալ հետևյալ նպատակների ապահովումը.

- *Վարչակազմի, դատապարտյալների և այլոց ապահովությունը*- դատապարտյալները, ովքեր պահվում են խցերում, որտեղ բացակայում է կարգապահությունն ու կարգուկանոնը, այլ դատապարտյալների կողմից բռնության և այլ վտանգների զոհ կարող են դառնալ
- *Ներքին անվտանգության ապահովում*- ցածր կարգապահությունը փախուստների և անվտանգության հետ կապված այլ ռիսկերի տեղիք կարող է տալ
- *Սահմանված կարգի պահպանում*- վերջինս նպաստում է ներքին հարաբերություններում վստահության ստեղծմանն ու պահպանմանը, որտեղ լարված իրավիճակների ու բախումների հավանականությունը խիստ փոքրանում է
- *Ընդհանուր կարգապահության ապահովում*- բանտային համակարգի ընդհանուր կառավարումն ու բանտում ընդհանուր կարգապահության ապահովումը միմյանց հետ պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում

Վերը ներկայացվածի հաջող իրագործումը հնարավոր է միայն, եթե դատապարտյալները իրապես գիտակցում են կարգապահության դերն ու ազդեցությունը իրենց պատժի հետագա կրման վրա: Ավելին, դատապարտյալները պետք է վստահ լինեն և հավատան, որ կարգապահությունը կհանգեցնի վաղաժամկետ ազատման:

Հարկ է նշել նաև, որ դատապարտյալների կարգապահությամբ պայմանավորված պայմանական վաղաժամկետ ազատման իրագործումը բանտային ադմինիստրացիայի ձեռքում գործիք չպետք է ծառայի դատապարտյալներին ավելորդ

Ճնշումների ենթարկելու կամ տրված լիազորությունները չարաշահելու համար: Հետևաբար, պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը պետք է հնարավորինս հստակ, հասկանալի ու իրագործելի լինի դատապարտյալների համար, որպեսզի վերջիններս իրենց կամարտահայտությամբ դրսևորեն համապատասխան վարքագիծն ու նպաստեն բանտային կարգապահությանը:

Պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը նման մոտեցմամբ դրական ազդեցություն կունենա հատկապես ՀՀ քրեակատարողական համակարգում, որտեղ նկատելի է հիերարխիկ հարաբերությունների ու ոչ ֆորմալ հեղինակությունների բացասական ազդեցությունը ընդհանուր կարգուկանոնի վրա: Համակարգի արդյունավետ իրագործումն ու ներքին կարգապահությունը գոնե որոշ չափով կվերացնի դատապարտյալ-դատապարտյալ-ադմինիստրացիա հարաբերություններում առկա կախվածությունը:

Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն

Պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը գործում է արևմտյան Եվրոպայի բոլոր երկրների քրեական իրավունքի համակարգերում: Որոշ երկրներում այն գոյություն ունի շուրջ մեկ դարից ավելին: Պետք է նշել, որ պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը իրավական համակարգերում ի սկզբանե նշանակալից նորամուծություն է եղել, որը էապես փոխել է քրեական իրավունքում պատժի վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները: Պատժի և դատապարտյալի ուղղման վերաբերյալ քրեական իրավունքում մոտեցումները փոխվել են մասնավորապես 18-րդ դարի վերջից սկսած՝ Մոնտեսպիոյի, Չեզարե Բեկարիայի և

վոն Ֆյորբախի գիտական աշխատանքների և հետազոտությունների ազդեցության ներքո¹²:

Որպես արդյունք ներկայումս գոյություն ունեն պետությունների համար պարտադիր համարվող պատժողական և ուղղման քաղաքականության սկզբունքներ:

Մասնավորապես, դրանք են՝

- Պատժողական և ուղղման/վերականգնողական քաղաքականությունը պետք է իրականացվի արդարության, համաչափության և հնարավորության սկզբունքների միջոցով
- Պատժողական և ուղղման քաղաքականությունը օրենսդրի կողմից պետք է հնարավորինս հստակ սահմանվի և նպատակային լինի
- Պատիժների ու ուղղման միջոցների հետ մեկտեղ պետք է հասանելի լինեն նաև վերահսկողական նպատակներով գործող համապատասխան հասարակական ծրագրեր
- Նման քաղաքականությունը պետք է քիչ ծախսատար լինի, արտացոլի գործող պահանջներն ու հիմնախնդիրները
- Պատիժների նվազման քաղաքականությունը պետք է կանխարգելման, առողջապահական, աշխատանքային և պետական այլ ռազմավարություն ընդգրկի¹³

Նման սկզբունքների առկայության արդյունքներից մեկն էլ ներկայումս ձևավորված վաղաժամկետ պայմանական ազատման համակարգն է, որը տարբեր պետություններում տարբեր կերպ է իրագործվում՝ կախված տվյալ պետության դատաիրավական համակարգից, ինստիտուտի նպատակային նշանակությունից և համապատասխան ռեսուրսների առկայությունից: Ավելին, մինչ օրս ձևավորված կանոններն ու սկզբունքները կարողացել են քննարկվող ինստիտուտի համար համընդհանուր ճանաչում գտած համակարգեր սահմանել: Արդյունքում, պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը, թեպետև որոշ առանձնահատկություններով, սակայն հիմնական հատկանիշներով նույն կերպ է իրականացվում զարգացած երկրների դատաիրավական համակարգում:

¹² Concepts of conditional release in Western Europe, Peter J.P. Tak, 1989

¹³ Principles of Effective State Sentencing and Corrections Policy, a report of the NCSL Sentencing and Corrections Work Group, Alison Lawrence and Donna Lyons, 2011

**Միջազգային ստանդարտներ: Համեմատական վերլուծություն
պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ միջազգային
ստանդարտների և ՀՀ-ում գործող համակարգի միջև**

Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային ստանդարտները ձևավորվել են մասնավորապես ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի կողմից:

Այսպես, *Միավորված ազգերի կազմակերպության կողմից Ազատագրված հետ կապ չունեցող նվազագույն ստանդարտ կանոնների* /Տոկիոյի Կանոններ/ չորրորդ մասով սահմանված են դատապարտյալների կողմից հասարակություն վերադառնալու մեխանիզմներն ու անհրաժեշտ գործողությունները: Մասնավորապես, սահմանված է, որ իրավասու մարմինը պետք է իր տրամադրության տակ հետդատապարտման մի շարք այլընտրանքներ ունենա՝ ինստիտուցիոնալացումից խուսափելու և դատապարտյալների ինտեգրմանը նաստելու նկատառումներից ելնելով: Իսկ նույն գլխի 9.4 կետի համաձայն՝ ազատման ցանկացած եղանակ պետք է հնարավորինս վաղ իրականացվի¹⁴:

ՄԱԿ-ի կողմից ընդունված մեկ այլ խումբ կանոնների, այն է՝ Բանգոկի Կանոնների համաձայն պայմանական վաղաժամկետ ազատման որոշումները պետք է կիրառելի լինեն նաև իգական սեռի դատապարտյալների համար¹⁵:

Թերևս պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ առավել մանրակրկիտ մոտեցում ցուցաբերվել է Եվրոպայի Խորհրդի կողմից: Դեռևս 1973 թվականին ԵԽ կողմից ընդունվեցին Եվրոպական Բանտային Կանոնները, որոնք վերանայվել և զարգացում են ապրել 2006 թվականին՝ ի պատասխան պատժողական քաղաքականության զարգացումներին: Այս կանոնները հիմնված են ՄԱԿ-ի ստանդարտ նվազագույն կանոնների վրա, որոնք սահմանում են դատապարտյալների և բանտային պայմանների վերաբերյալ ընդհանուր ճանաչում և ընդունում գտած սկզբունքներն ու պրակտիկան: Պայմանական վաղաժամկետ

¹⁴ United Nations Standard Minimum Rules for Non-Custodial Measures 1990, (The Tokyo Rules), United Nations

¹⁵ United Nations Rules for the Treatment of Women Prisoners and Non-Custodial Measures for Women Offenders (the Bangkok Rules), United Nations

ազատման մասով կանոնները սահմանում են ազատ արձակումից առաջ և հետո դատապարտյալներին հատուկ ծրագրերի ու միջոցառումների միջոցով տրամադրվող օժանդակության հիմնական միջոցները:

Եվրոպայի խորհրդի կողմից 2003 թվականին ընդունվել է պայմանական ազատման վերաբերյալ /2003/22 հանձնարարականը՝ հիմք ընդունելով այն, որ պայմանական ազատումը նոր հանցագործության կատարումը կանխելու և դատապարտյալի պլանավորած ու վերահսկվող ինտեգրումն ապահովելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն է:

Հանձնարարականի համաձայն պայմանական ազատումը նշանակում է դատապարտյալի վաղաժամկետ ազատումը՝ հետազատման անհատականացված պայմանների ներքո: Ընդ որում, ներումն ու համաներումը այս սահմանման մեջ չեն մտնում: Հանձնարարականում տեղ գտած ընդհանուր սկզբունքների համաձայն պայմանական ազատումը պետք է նպատակ հետապնդի օգնել դատապարտյալին բանտային կյանքից անցում կատարել հասարակական, օրինապահ կյանքի՝ հսկողության և հետազատման պայմաններ սահմանելու միջոցով: Ներպետական օրենքները պետք է նման հնարավորություն ընձեռեն բոլոր դատապարտյալներին՝ ներառյալ ցմահ ազատազրկվածներին:

Վերը ներկայացված միջազգային ստանդարտների և ՀՀ-ում գործող համանման դրույթների համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՀ օրենսդրական դաշտն ու իրավակիրառ պրակտիկան դեռևս լրացումների և շտկումների կարիք ունեն:

Այսպես, համաձայն վերը ներկայացված ԵԽ բանտային կանոնների՝ ազատ արձակումից բավականաչափ երկար ժամանակ առաջ դատապարտված բանտարկյալներին պետք է *աջակցություն ցուցաբերել՝ հատուկ ընթացակարգերով և ծրագրերով*, որոնք նրանց հնարավորություն կտան բանտային կյանքից անցում կատարել հասարակություն՝ օրինապահ կյանքի: Հաջորդ դրույթի համաձայն՝ ավելի երկար ժամկետներով պատիժներ կրող բանտարկյալների դեպքում պետք է քայլեր ձեռնարկել դեպի հասարակություն նրանց աստիճանական վերադարձը երաշխավորելու ուղղությամբ: Վերջինս հնարավոր է իրականացնել նախքան ազատ արձակվելը բանտում իրականացվող *ծրագրերի միջոցով, կամ վերահսկողության*

ներքո մասնակի կամ պայմանական ազատամբ՝ համադրելով սոցիալական օժանդակության հետ: Հաջորդ կետի համաձայն՝ սոցիալական ծառայությունների կամ մարմինների ներկայացուցիչներին պետք է հնարավորություն տրվի անհրաժեշտության դեպքում ցանկացած ժամանակ մուտք գործել բանտ և հանդիպել բանտարկյալների հետ՝ օգնելու վերջիններիս ազատ արձակմանը նախապատրաստվելու և ազատ արձակումից հետո իրականացվող խնամքի ծրագրեր պլանավորելու գործում¹⁶:

Պետք է նշել, որ ներկայացվածի առումով ՀՀ-ում բացակայում են քրեակատարողական հիմնարկներում բանտարկյալներին օժանդակելու ու հասարակություն վերաինտեգրելու ծրագրերն ու հատուկ ընթացակարգերը: Ինչի պայմաններում դատապարտյալները մի կողմից, հասարակությունը մյուս կողմից, բախվում են մի շարք բացասական հետևանքների: Վերջիններիցս են կրկնահանցագործությունը, ընտանեկան և այլ հարաբերությունների վերականգնման դժվարությունները, աշխատանքի տեղավորման խոչընդոտները և այլն:

Ավելին, ՀՀ Քրեակատարողական հիմնարկներում սոցիալական աշխատողների ու հոգեբանների թիվն ու դերը բավականին փոքր է: Չնայած այն հանգամանքին, որ քրեակատարողական հիմնարկներում նախատեսված են հոգեբանների ու սոցիալական աշխատողների հաստիքներ, այնուամենայնիվ, վերջիններս կամ բացակայում են կամ արդյունավետ չեն գործում¹⁷: Իսկ վաղաժամկետ ազատման ենթակա դատապարտյալների հետ առանձին և ինտենսիվ աշխատող սոցիալական աշխատակիցներն ու հոգեբանները ընդհանրապես բացակայում են:

Կրկին անդրադառնալով ԵՄ Նախարարների Կոմիտեի հանձնարարականին՝ պետք է հիշատակել դրանով նախատեսված պայմանական վաղաժամկետ ազատման երկու հիմնական համակարգեր, այն է՝

- Հայեցողական
- Պարտադիր

¹⁶ “Եվրոպական բանտային կանոնների մասին” ԵՄ Նախարարների կոմիտեի թիվ 2006/2 հանձնարարական, 107.1-107.5 կետեր

¹⁷ Նման եզրահանգման են հանգել Հասարակական Դիտորդական խմբի անդամները՝ քրեակատարողական հիմնարկներ իրենց պարբերական այցերի արդյունքում

Այսպես, հայեցողական համակարգով գործող պայմանական վաղաժամկետ ազատման պարագայում օրենքով հստակ պետք է սահմանված լինի պատժի այն նվազագույն ժամանակահատվածը, որը պետք է կրի դատապարտյալը: Տվյալ նվազագույն ժամկետը վրա հասնելու դեպքում իրավասու մարմինները պետք է սկսեն ազատման ընթացակարգը: Ինչ վերաբերվում է կիրառվող չափանիշներին, ապա դրանք պետք է պարզ և հասկանալի լինեն: Ավելին, նման չափանիշները պետք է իրատեսական լինեն՝ հաշվի առնելով դատապարտյալի անհատական, սոցիալական և տնտեսական առանձնահատկություններն ու վերականգնողական ծրագրերի առկայությունը:

Իրավասու մարմնի կողմից վաղաժամկետ ազատումը մերժող որոշում կայացնելու դեպքում պետք է նշանակվի նաև հարցի վերալսման օրը: Յուրաքանչյուր դեպքում, դատապարտյալները պետք է ազատման համար կրկին դիմելու հնարավորություն ունենան:

Պարտադիր վաղաժամկետ ազատման համակարգի դեպքում օրենքով սահմանվում է սոսկ պատժի ժամանակահատված, որը պետք է հաշվի առնվի ազատման հարցը քննելիս: Միայն բացառություն կազմող հանգամանքների դեպքում, որոնք պետք է սահմանված լինեն օրենքով, ազատումը հնարավոր է հետաձգել:

Այս առումով ՀՀ պրակտիկայում նկատելի է գոյություն ունեցող երկու հիմնական համակարգերի խառնուրդ՝ չհստակեցված և չտարանջատված հիմքերով: Մասնավորապես, մեզ մոտ վաղաժամկետ ազատման համար նախատեսվում է ինչպես պատժի նվազագույն ժամանակահատվածը, որը պետք է կրի դատապարտյալը, այնպես էլ արհեստականորեն ձևավորված չափանիշներ: Սահմանված չափանիշները սակայն ոչ միայն հստակ չեն, այլ նաև պրակտիկորեն իրատեսական չեն, ինչի արդյունքում ազատման գործընթացը ավելի է բարդանում: Ստացվում է, որ մեր քրեակատարողական համակարգում նախատեսված է *ինչպես հայեցողական, այնպես էլ պարտադիր համակարգ*, որի նման համադրությունը սակայն արդյունավետ չէ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

- Պատժի կրման նվազագույն ժամկետը վրա հասնելուն հաջորդում է որոշակի չափանիշների հիման վրա գնահատման գործընթաց, որը արհեստականորեն

բարդեցնում է ազատման համակարգը նույն այդ չափանիշների անիրատեսական և անհասկանալի լինելու պատճառով: Այսպես, չափանիշների առկայությունը ինքնին ենթադրում է հայեցողական համակարգի առկայություն, մինչդեռ ժամանակ նախատեսված է նաև պատժի կրման նվազագույն ժամկետը: Հատկանշական է, որ մի շարք երկրներում գոյություն ունեցող *հայեցողական համակարգը ընկալվում է որպես պայմանական ազատում, որը տրվում է վաղաժամկետ ազատման համար իրավասու մարմնի կողմից և իրականացվում է մի շարք պայմանների ներքո:* Այդ պայմանները իրենց հերթին երկու հիմնական տեսակի են լինում՝ *ստանդարդ և հատուկ:* Նախ պետք է նշել, որ արտասահմանյան երկրներում “պայման” տերմինի ներքո հասկացվում է ցանկացած վավերապայման և պահանջ, որը ընկած է իրավասու մարմնի կողմից կայացվող որոշման հիմքում: Ստանդարդ պայմանը սահմանվում է օրենքով կամ որոշմամբ և կիրառվում է բոլոր պայմանական ազատվող դատապարտյալների համար¹⁸: Մինչդեռ հատուկ պայմանները կիրառվում են՝ հաշվի առնելով դատապարտյալի մոտ կրկնահանցագործության ռիսկը: Մեզ մոտ չափանիշների առումով նման տարանջատում գոյություն չունի

- Գոյություն ունեցող չափանիշների մասով ևս առկա են խնդիրներ: Այսպես, ընդունված կանոնի համաձայն դատապարտյալի գնահատումը, որը դրվում է որոշման հիմքում, ներառում է կոնկրետ գործի պարբերական և մանրակրկիտ քննությունը, դատապարտյալի հետ կապված դրական ֆակտորները, ռիսկի գործոնը, դատապարտյալի կարիքներն ու դրանց միջամտելու անհրաժեշտությունը, ինչպես նաև դատապարտյալի արձագանքը՝ համապատասխան միջամտությանը: Ընդհանուր առմամբ գնահատման որոշումը պետք է ներառի՝ դատապարտյալի առաջխաղացումը, սոցիալական և քրեական պատմությունը, ռիսկի գնահատման արդյունքները, անհրաժեշտության դեպքում ռիսկի հատուկ գնահատումը, դատապարտյալի հիմնական պահանջմունքներն ու հանրության կողմից դրանք ընկալվելու հավանականությունը: Այսինքն, հաշվի է առնվում դատապարտյալի ինչպես

¹⁸ Introductory Handbook on the Prevention of Recidivism and the Social Reintegration of Offenders, United Nations Office on Drugs and Crime

անցյալը, այնպես էլ ապագա վարքագիծը՝ ուղղման նկատառումներից ելնելով: Երկրների մեծամասնությունում, որտեղ նախատեսված է հայեցողական համակարգ, այս տեղեկատվությունը տրամադրվում է պայմանական վաղաժամկետ ազատման համար իրավասու մարմին, որն էլ կայացնում է որոշումը: Մեզ մոտ կրկին սահմանված են չափանիշներ, որոնք դատապարտյալի ուղղվելու հավանականությունն ու ապագա վարքագիծը ի վիճակի չեն հստակ գնահատել: Ավելին, այդ չափանիշների հիման վրա կայացվում է որոշում և հետո նոր ներկայացվում դատարանին՝ վերջնական որոշման համար: Այսինքն, *անհրատեսական և ոչ հստակ չափանիշների ոչ արդյունավետ կիրառումը զուգակցվում է տարբեր մամիհների կողմից բարդեցված ընթացակարգով որոշման կայացմանը, որը հանգեցնում է պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի ընդամենը տեսական գոյությանը:*

- Դատապարտյալի ազատման հարցը մինչև դատարանին հասնելը անցնում է երկու էտապներ, որոնք որոշում են կայացնում նույն այդ չափանիշների հիման վրա: Հատկանշական է, որ հայեցողական համակարգերում ազատման որոշումը կայացվում է վաղաժամկետ ազատման համար իրավասու մարմինների կողմից /paroling authority/: Յուրաքանչյուր երկրում նման մարմինների իրավասությունների շրջանակը, բնույթն ու գործառնությունները տարբեր են, սակայն բոլոր տեղերում հիմնական դերը կայանում է պայմանական ազատում շնորհելու կամ մերժելու որոշում կայացնելու մեջ: Մեզ մոտ որոշում կայացնելու գործընթացը ավարտվում է դատարանի որոշմամբ, որը սակայն անցնում է ՔԿՀ վարչակազմի և անկախ հանձնաժողովի գնահատման և որոշման փուլերով, որոնց լիազորությունների ու որոշում կայացնելու հիմքերի շրջանակը թերի է սահմանված
- Ազատման հարցը հետաձգելը մեզ մոտ ոչ թե բացառիկ դեպքերում է տեղի ունենում /պարտադիր համակարգ/, այլ ազաման դրական որոշումն է բացառիկ դեպքերում կայացվում. Նման պրակտիկան բացատրվում է նաև նրանով, որ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինները հիմք են ընդունում նաև այսպես կոչված «չգրված օրենքները», ըստ որոնց գոյություն

ունեն որոշակի խումբ հանցագործություններ, որոնց պարագայում դատապարտյալի ազատ արձակման հարցը նույնիսկ եթե քննության է առնվում, ապա բացասական պատասխան է ստանում

Խոսելով միջազգային ստանդարտների մասին՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև Մադու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածին և ըստ այդմ Եվրոպական Դատարանի կողմից ներկայացված դիրքորոշումներին: Այսպես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 5-րդ հոդվածին համապատասխան՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

(...)

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում եւ կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է (...):՝

Մեկնաբանելով այս իրավունքը, Եվրոպական Դատարանը՝ Von Bulow v United Kingdom (2003 թ.) գործով նշել է՝

«24. Տվյալ գործով դիմողի ցմահ ազատազրկման պարտադիր մասը լրացել էր 1998 թվականին: Այն ժամանակ, երբ պայմանական-վաղաժամկետ ազատման հանձնաժողովը վերանայում էր դիմողի գործը 2001 թվականին, այն չունեւր դիմողին ազատելու հրամանի արձակման իրավասություն, և կարող էր միայն այդ մասին եզրակացություն [խորհուրդ] տալ Պետական Քարտուղարին: Չէր կատարվել բանավոր քննություն, որը հնարավորություն տար հարցաքննելու և խաչաձև հարցաքննության ենթարկելու վկաներին, կապված այն հարցի հետ, որ դիմողը դեռևս վտանգ է ներկայացնում հանրության համար: Կառավարությունը չէր վիճարկում, որ դիմողի ազատազրկման տևողությունը չի վերանայվել այնպիսի մարմնի կողմից, որն

ուներ ազատման հրաման արձակելու իրավասություն, կամ չի ենթարկվել այնպիսի ընթացակարգի, որը պարունակեր Կոնվենցիայի 5(4) հոդվածով ամրափակված երաշխիքներ»:

Hussain v United Kingdom (1996 թ.) գործով Եվրոպական Դատարանը նշել է՝

«59. ... Այնպիսի սկզբունքային նշանակություն ունեցող գործերով, որպիսին են ազատությունից զրկելու հետ կապված գործերով, և երբ ծագում են հարցեր, կապված, օրինակ, դիմողի բնավորության և հոգեվիճակի գնահատման հետ, արդար դատավարության ապահովման համար կարող է անհրաժեշտ լինել, որպեսզի դիմողը ներկա լինի դատավարությանը:

60. ... Դիմողի իրավիճակի պես իրավիճակներում, երբ քննարկվում է ազատագրկման զգալի ժամկետի հետ կապված հարց, և որտեղ նրա բնավորությանը բնորոշ գծերը և հասունության աստիճանը կարևոր դեր են խաղում որոշելու, թե վտանգավոր է արդյոք նա հանրության համար, 5-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջում է բանավոր լսումներ մրցակցային դատավարության ենթատեքստում, որն ենթադրում է դիմողի շահերի օրինական ներկայացուցչություն ու վկաներ հրավիրելու և հարցաքննելու հնարավորություն»:

Amuur v France (1996 թ.) գործով Եվրոպական Դատարանը նշել է՝

«50. ... Պնդելով, որ ցանկացած ազատագրկում պետք է տեղի ունենա օրենքով սահմանված կարգով, Կոնվենցիայի 5(1) հոդվածը նախ և առաջ պահանջում է, որպեսզի ցանկացած կալանավորում կամ ձերբակալում ունենա իրավական հիմնավորում ներպետական օրենսդրության մեջ: Սակայն այս բառերը ոչ միայն հղում են պարունակում ներպետական օրենսդրությանը, ինչպես «օրենքին համապատասխան» և «օրենքով նախատեսված» արտահայտությունները, որոնք առկա են 8-11 հոդվածների երկրորդ կետում: Այս բառերը նաև վերաբերում են օրենքի որակին, պահանջելով, որպեսզի այն համապատասխանի օրենքի գերակայության սկզբունքին, որը բնորոշ է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին: Որպեսզի հավաստիանալ, համապատասխանում է արդյոք ազատագրկումը ազգային օրենսդրության հետ համատեղելիության սկզբունքին, դատարանը պետք է ոչ միայն գնահատի քննարկվող ոլորտի ազգային օրենսդրությունը, այն և՛ գնահատի այլ

իրավական ակտերի որակը, որոնք կիրառվել են քննարկվող անձանց հանդեպ: Այս իմաստով որակը ենթադրում է, որ եթե ազգային օրենքը պահանջում է ազատագրվում, հատկապես քաղաքական ապաստան խնդրող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ, ապա այն պետք է բավարար չափով մատչելի և ճշգրիտ լինի՝ կամայականության վտանգից խուսափելու համար»:

Վերը նշվածից հետևում է, որ անձին պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ հարցի քննությունը պետք է՝

ա) իրականացվի այնպիսի մարմնի կողմից, որն ունի դատապարտյալին ազատ արձակելու իրավասություն,

(տես՝ *Von Bulow v United Kingdom*)

բ) հիմնված լինի օրենքով սահմանված, մատչելի և կանխատեսելի ընթացակարգերի վրա,

(տես՝ *Amuur v France*)

գ) իրականանա մրցակցային սկզբունքով,

(տես՝ *Hussain v United Kingdom*)

դ) քննության արդյունքում կայացված որոշումը պետք է լինի պատճառաբանված, որոշմանը համաձայն չլինելու դեպքում դատապարտյալն իրավունք ունենա այն բողոքարկել:

(տես՝ «Պայմանական ազատման վերաբերյալ» Եվրոպայի Խորհրդի (2003)22 Հանձնարարականը, 16-21 կետեր, ՄԱԿ-ի նվազագույն կանոնները ազատագրվման հետ չկապված միջոցների մասին (Տոկիոյի Կանոնները), Բաժին 9.3)>>

Միջազգային լավագույն փորձի ներկայացում

Պետք է նշել, որ բավականին դժվար է առանձնացնել կոնկրետ երկիր, որը լավագույնս հանդես է գալիս պայմանական ազատ արձակման որդեգրած համակարգով: Սա բացատրվում է նրանով, որ յուրաքանչյուր երկիր նախ առանձնանում է իր դատաիրավական համակարգով, ընդհանուր պատժողական քաղաքականությամբ, ռեսուրսների առկայությամբ և այլն, ինչն էլ ինքնին

ազդեցություն է թողնում պայմանական վաղաժամկետ ազատ արձակման այս կամ այն համակարգի վրա:

Այսպես, որոշ երկրներ, ինչպիսիք են Ֆինլանդիան, Ավստրալիան և Գերմանիան պայմանական վաղաժամկետ ազատումը կիրառում են մեխանիկորեն՝ պատժի սահմանված ժամկետի որոշ մասը կրելուց հետո: Ֆինլանդիայում գործող կանոնն այսպիսին է՝ անձը, ով նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել, ազատվում է նշանակված պատժի կեսը կրելուց հետո¹⁹: Ֆինլանդիայում ազատազրկվածներին պայմանական վաղաժամկետ ազատելու հիմնական պայմանը նշանակված պատժի 5/6-ը կրելն է: Ազատման հարցը որոշվում է Հելսինկիի Վերաքննիչ դատարանի կողմից²⁰:

Երկրների մեկ այլ խումբ, որի մեջ են մտնում Անգլիան և Ուելսը, պայմանական վաղաժամկետ ազատման հարցում կենտրոնական դերակատար են համարում դատարաններին և Պայմանական Վաղաժամկետ ազատման Խորհրդին: Դատարանը մասնավորապես, որոշում է քրեակատարողական հիմնարկում կրման ենթակա պատժաչափի համամասնությունը, իսկ Խորհուրդը որոշում է ազատման ենթակայությունը: Խորհուրդը ինքնին արդարադատության համակարգում գործող ինքնուրույն, գործադիր, ոչ գերատեսչական հանրային մարմին է, որի անդամները ընտրվում և նշանակվում են Արդարադատության նախարարության կողմից: Խորհուրդը հիմնականում կազմված է դատական անդամներից /դատավորների/, հոգեբաններից, հոգեբույժներից, պրոբացիոն ծառայության անդամներից և անկախ անդամներից, որոնց մեջ են մտնում տարբեր մասնագիտությունների տեր անհատներ: Անգլիայում ազատման հարցը որոշելիս հիմնական չափորոշիչ հանդիսանում է հանրային անվտանգության գործոնը: Դատապարտյալը, ում համար սահմանված է պատժի կոնկրետ չափ, կարող է դիմել վաղաժամկետ ազատման համար սահմանված պատժի կեսը լրանալուց 6 ամիս առաջ: Իսկ նրանք, ում պատիժը կոնկրետ ժամանակահատվածով նախատեսված չէ, օրինակ ցմահ ազատազրկվածները, կարող են դիմել ազատման համար միայն տվյալ հանցանքի համար նախատեսված պատժի կրման նվազագույն ժամկետը լրանալուց հետո²¹:

¹⁹ Criminal Sanctions Agency, “Prison Services,” January 16, 2011

²⁰ Հասանելի է՝ <http://www.rikosseuraamus.fi/en/index/enforcement/release.html> հասցեում

²¹ Հասանելի է՝ <http://www.paroleboard.gov.uk/> հասցեում

Խորհրդի միջոցով է ընթանում ազատման գործընթացը նաև Կանադայում, որտեղ կրկին վերջինս որոշում է ազատման ենթակա լինելու հարցը: Կանադայում վաղաժամկետ ազատման որոշումները կայացվում են Վաղաժամկետ ազատման Խորհրդի կողմից, որը Հանրային Անվտանգության նախարարության ներքո ստեղծված ինքնուրույն մարմին է: Խորհուրդը կազմված է տարբեր մասնագիտությունների տեր անձանցից, մասնավորապես՝ քրեագետներ, իրավաբաններ, ոստիկանության աշխատակիցներ, պրոբացիոն ծառայության աշխատակիցներ, հոգեբաններ, սոցիալական աշխատակիցներ, ուսուցիչներ, առողջապահության ոլորտի մասնագետներ, ինչպես նաև Խորհրդարանի ու զինված ուժերի ներկայացուցիչներ²²: Այստեղ որոշումները կայացվում են երեք հիմնական չափորոշիչների հիման վրա՝ քրեական պատմությունը, ՔԿՀ-ում ցուցաբերած վարքագիծն ու դատապարտյալի համար ազատման անհրաժեշտությունը:

Հատկանշական է, որ վերոնշյալ երկրները, որտեղ ազատման համակարգը գործում է մեխանիկորեն՝ ժամկետը վրա հասնելուց հետո, աչքի են ընկնում ազատման բարձր ցուցանիշներով: Այնուամենայնիվ, գրեթե բոլոր երկրներում հանցավորության մակարդակը, անկախ պայմանական վաղաժամկետ ազատման ցուցանիշից, էական տարբերություն չի կրում: Օրինակ, Միացյալ Նահանգներում վաղաժամկետ ազատվող դատապարտյալների շուրջ 16%-ը վերադառնում են բանտ՝ նշանակված պայմանը կամ հսկողության միջոցը խախտելու պատճառով²³:

Միջազգային փորձում առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերվում է նաև ցմահ դատապարտյալների վաղաժամկետ ազատման հարցում: Այսպես, երկրներում, որտեղ գործում է ցմահ ազատազրկման պատժատեսակը, վաղաժամկետ ազատումը կիրառվում է օրենքով սահմանված պատժի նվազագույն չափը կրելուց հետո: Ներկայումս նման մոտեցում են ցուցաբերում մոտ 32 երկրներ, մասնավորապես՝ Ալբանիայում 25 տարի պատիժ կրելուց հետո, Ավստրիայում՝ 15, Ադրբեջանում՝ 25, Բելգիայում՝ 15, սակայն ռեցիդիվիստների համար 19 կամ 23 տարի երկարաձգմամբ, Բուլղարիայում՝ 20, Դանիայում՝ 12, Ֆինլանդիայում՝ 12, Ֆրանսիայում՝ 18, իսկ

²² Performance Monitoring Report 2006-2007, Parole Board of Canada

²³ Thomas P. Bonczar, Lauren E. Glaze, *Probation and Parole in the United States, 2008* (Washington, DC: Bureau of Justice Statistics, 2009).

որոշակի խումբ մարդասպանների համար 30, Հունգարիայում՝ 20, Ռուսաստանում 25 և այլն²⁴:

Որոշ խումբ երկրներում ցմահ ազատազրկվածներին վաղաժամկետ ազատման հնարավորություն նախատեսված չէ: Օրինակ, այդպիսիք են Իսլանդիան, Լիտվան, Մալթան, Հոլանդիան և Ուկրաինան: Այնուամենայնիվ, այս երկրներում առկա է նախագահական, թագավորական կամ նախարարական ներման միջոցով վաղաժամկետ ազատման հնարավորություն: Այսինքն, նույնիսկ այն պարագայում, երբ ցմահ ազատազրկվածների համար վաղաժամկետ ազատման համակարգը չի գործում, պետք է նախատեսվեն սահմանված պատժի վերջնական ժամկետից շուտ ազատ արձակվելու հնարավորություններ:

Ցմահ դատապարտվածների վաղաժամկետ ազատման հարցը քննարկելիս հիշատակման է արժանի Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի նախադեպային իրավունքը: Դատարանը բազմիցս հաստատել է, որ ցմահ ազատազրկվածների վաղաժամկետ ազատման հնարավորությունը նրանց իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Այսպես, Կաֆկարիսն ընդդեմ Կիպրոսի գործով որոշման մեջ Դատարանը նշել է, որ ցմահ ազատազրկման կրճատման հարցը որոշելիս պետք է պարզել, արդյոք ցմահ ազատազրկվածը ազատվելու հեռանկար ունի, թե ոչ: Հարցի վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքը սահմանում է, որ այն պարագայում, երբ ազգային օրենսդրությունը հնարավորություն է տալիս վերանայել ցմահ ազատազրկումը, ապա Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածի արգելքը կարելի է համարել բավարարված: 3-րդ հոդվածի ներքո անհրաժեշտ է դատապարտյալի համար վաղաժամկետ ազատման հույս ստեղծել, որի համաձայն ցմահ ազատազրկումը դե յուրե և դե ֆակտո ենթակա է նվազեցման: Վինտերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Դատարանը կրկին անդրադարձել է ցմահ ազատազրկման պարագայում վաղաժամկետ ազատման հնարավորության և Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հարաբերակցությանը: Ըստ այդմ, որպեսզի 3-րդ հոդվածի պահանջը բավարարվի, պետք է ինչպես պատժի վերանայման, այնպես էլ վաղաժամկետ

²⁴ Reducing the Use of custodial measures and sentences in the Republic of Armenia, Assessment report, Iuliana Carbunaru and Gerard de Jonge, 2013

ազատման հնարավորություն լինի: Իսկ թե երբ հնարավոր կլինի վերանայել կամ վաղաժամկետ ազատել, թողնված է ազգային օրենսդրությունների հայեցողությանը²⁵:

Գործող համակարգերի միջև տարբերությունը նկատելի է նաև անչափահաս իրավախախտների պարագայում: Այսպես, անչափահասների պարագայում գոյություն ունեն երկրներ, որտեղ նախատեսվում է պատժի կրման նվազագույն չափը, որը համեմատաբար քիչ է: Առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նման կերպ վաղաժամկետ ազատ արձակելիս դատապարտյալի վրա դրվող հսկողության միջոցներն ու պայմանները շատ ավելին են և շատ ավելի երկար են տևում: Նման պրակտիկա գործում է մասնավորապես Հոլանդիայում, Լեհաստանում, Էստոնիայում և Սլովենիայում: Իսկ ահա երկրների մեկ այլ խումբ որդեգրել է այնպիսի համակարգ, որտեղ անչափահաս դատապարտյալները պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պետք է կրեն սահմանված պատժի առնվազն կեսը, որին կհաջորդի ազատությունը: Նման օրինակ են Իռլանդիան, Անգլիան և Վելսը: Վերջիններս նման համակարգ ներդրել են հիմնականում նպատակ հետապնդելով կանխել կրկնահանցագործությունն ու հանրությանն անվտանգ պահել: Մինչդեռ կան երկրներ, որտեղ անչափահասների վաղաժամկետ ազատումը իրականացվում է բեռնաթափման /Հունաստան/ կամ ռեաբիլիտացիայի /Սլովենիա/ նպատակով:

Հատկանշական է, որ որոշ երկրներում ազատման գործընթացը բավականին հեշտացված է, օրինակ Հոլանդիայում անչափահաս դատապարտյալը պետք է կրի սահմանված պատժի երկու երրորդը, որից հետո կարող է ազատ արձակվել դատախազի կողմից՝ անմիջականորեն: Նորվեգիայում նույն հիմքով ազատման գործընթացում դատախազից բացի ներգրավված է համապատասխան քրեակատարողական հիմնարկը:

Այս առումով պետք է նշել նաև, որ Պորտուգալիայում, Իսպանիայում և Ավստրիայում պայմանական վաղաժամկետ ազատման համար անհրաժեշտ է դատարանի որոշումը: Իսկ ահա Հոլանդիայում և Անգլիայում այն տեղի է ունենում մեխանիկորեն՝ պատժի նախատեսված չափը կրելուց հետո²⁶:

²⁵ Vinter and others v. the United Kingdom, No 66069/09

²⁶ Conditional Release for Children in Europe, Justice for children symposium, 2012

Վերջաբան

Սույն հետազոտության ընթացքում քննարկվող համակարգի վերաբերյալ ներպետական օրենսդրության և դրա պրակտիկ կիրառելիության հետ կապված խնդիրների վեր հանումը ապացուցեց, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը չի ծառայում իր նպատակային նշանակությանն ու ըստ էության չի կիրառվում: Ներկայացված միջազգային լավագույն փորձն ու գործող ստանդարտները մասամբ բացատրում են մեր քրեաիրավական իրականությունում այս ինստիտուտի խնդիրների պատճառները: Միննույն ժամանակ պետք է նշել, որ ներպետական օրենսդրության ու համակարգի՝ ապագայում միջազգային չափորոշիչներին համապատասխանելիության ապահովումը չի լուծի առաջ քաշված բոլոր խնդիրները: Թերևս նման համապատասխանեցումը ի վիճակի կլինի լուծել մի խումբ կարևորագույն խնդիրներ, այնուամենայնիվ, ՀՀ-ում պայմանական վաղաժամկետ ինստիտուտի կայացումն ու արդյունավետ կիրառումը պայմանավորված է ոչ միայն միջազգային չափորոշիչների ու լավագույն փորձի ներմուծմամբ ու համապատասխանեցմամբ, այլ նաև ՀՀ իրականությանն ու քրեաիրավական համակարգին բնորոշ ուրույն համակարգի ստեղծմամբ: Ըստ այդմ, ներկայումս հրատապ է քննարկվող ինստիտուտի վերանայումն ու բարեփոխումը: Ինչի համար, մասնավորապես, պետք է փոփոխման ենթարկվի պայմանական վաղաժամկետ ազատման գոծընթացում ներգրավված մարմինների կազմը, նրանց ֆունկցիոնալ դերն ու իրավասությունների շրջանակը, որոշման հիմքում ընկած չափորոշիչների բնույթն ու շրջանակը, ինչպես նաև համապատասխան օրենսդրությունը: Անհրաժեշտ փոփոխությունները ըստ դասակարգման ներկայացվում է ստորև:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնարավոր համակարգի վերաբերյալ

- Նախատեսել որոշման կայացման երկաստիճան համակարգ, որտեղ քննարկվող գործի վերաբերյալ նախնական եզրակացությունը կտրվի ՔԿՀ կողմից, սակայն որոշիչ դեր կունենան Անկախ հանձնաժողովն ու դատարանը
- Պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ գոյություն ունեցող պարտադիր և հայեցողական համակարգերի միաժամանակյա գոյությունը նախատեսել ըստ *հանցագործությունների վտանգավորության աստիճանի*՝
 - Ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցագործությունների դեպքում պետք է գործի պարտադիր համակարգը՝ ազատ արձակման հեշտացված ընթացակարգով: Բացառություն կկազմեն ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցագործության կատարման համար դատապարտված այն անձանց գործերը, ովքեր պատժի կրման ընթացքում
 - թույլ են տվել ներքին կանոնակարգի խախտում, որի համար նշանակվել է 10 օր ժամկետով պատժախույց տեղափոխում տույժի տեսակը, և որի կիրառելուց հետո անցել է 6 ամիս
 - վաղաժամկետ ազատման հարցը քննարկելուց առաջ՝ վերջին 6 ամսվա ընթացքում ստացել են 2 և ավելի անընդմեջ տույժ՝ մինչև 10 օր ժամկետով պատժախույց տեղափոխվելու տույժի տեսքով
 - Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների պարագայում պետք է գործի հայեցողական համակարգը
 - Հայեցողական համակարգի դեպքում պետք է կիրառվող չափորոշիչների միջև տարբերակում մտցնել՝ սովորական և հատուկ չափորոշիչներ՝ ըստ հանցագործության ծանրության ու վտանգավորության ռիսկի

գնահատման, որոնց պարագայում սակայն հիմնական նպատակը հանրային անվտանգության ապահովումն է լինելու

- հատուկ չափորոշիչները, ինչպիսիք կարող են լինել դատապարտյալի հոգեբանական գնահատումը, ինչպես քրեական, այնպես էլ սոցիալական պատմության ուսումնասիրությունը, կրկնահանցագործության ռիսկի լրացուցիչ գնահատումը կկիրառվեն հետևյալ պարագաներում՝
 - սպանության դեպքում, եթե այն կատարվել է առանձնակի դաժանությամբ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, շահադիտական կամ խուլիգանական դրդումներով
 - անձի սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում
 - բնակչության առողջության դեմ ուղղված առավել վտանգավոր հանցագործությունների դեպքում
- վերանայել ցմահ ազատազրկվածների վաղաժամկետ ազատման հարցը, վերջիններիս վաղաժամկետ ազատումը պրակտիկայում պետք է կիրառելի և իրատեսական լինի
 - տուժողը պետք է իրավունք ունենա, որպեսզի իր դիրքորոշումը լսվի և հաշվի առնվի՝ անձին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ դատավարության ընթացքում

Գործող չափանիշների վերաբերյալ

- Հստակ տարանջատել ՔԿՀ վարչակազմի, Անկախ հանձնաժողովի և դատարանի կողմից “որոշման” կայացման հիմքում ընկած չափորոշիչները
- Առաջարկվող չափանիշները դարձնել ավելի հստակ և իրատեսական
- Կրթական, մշակութային և սպորտային միջոցառումներին մասնակցելու մասով տրամադրվող միավորները փոխել ու գնահատել ըստ ՔԿՀ-ի կողմից այդ միջոցառումներին մասնակցության համար տրվող հնարավորությունների

- Աշխատանքային զբաղվածության չափանիշը ևս գնահատել ըստ ՔԿՀ կողմից առաջարկվող աշխատանքային հաստիքների առկայության ու մատչելիության
- Կարգապահական տույժի առկայության հանգամանքը մանրամասն քննության առնել, օրինակ, ներկայումս գրեթե բոլոր դատապարտյալները օգտվում են բջջային հեռախոսներից, ինչը թեպետև արգելված է, բայց ՔԿՀ վարչակազմի “լուռ համաձայանության” ներքո ձեռք է բերել ավանդական բնույթ: Նման պայմաններում միայն հեռախոս օգտագործելու պատճառով տույժ նշանակելն ու անհրաժեշտ միավորներից զրկելը արդարացի չէ
 - նման հիմքով նշանակվող տույժերից խուսափելու համար առաջարկվում է նաև վերացնել հեռախոսների արգելքը, սակայն դրանց օգտագործման նկատմամբ հսկողություն սահմանել
- Անհատական ուղղման պլանի հանգամանքը գնահատել հոգեբանների պարբերական աշխատանքների արդյունքների ներքո
- մեթադոնային բուժում ստացող դատապարտյալների գնահատման բուժման պատրաստակամությունը դիտարկել որպես վարքագծի դրական փոփոխության նախադրյալ
- Եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել և այն չի մարվել, ոչ թե զրկել միավորից, այլ գնահատել պատրաստակամությունը ազատության պարագայում միջոցներ հայթայթելու ու վնասը հարթելու մասով՝ պահելով տուժողի շահերի պաշտպանության համաչափությունը
 - նման դեպքում հաշվի է առնվելու դատապարտյալի, նրա ընտանիքի ֆինանսական դրությունը, դատապարտյալի զբաղվածության ապահովման նախադրյալների առկայությունը
- “չգրված օրենքներով սահմանված արգելված հոդվածների” ցանկը, որոնց պարագայում պայմանական ազատում չի լինում, դարձնել հրապարակային

ՔԿՀ Վարչակազմի վերաբերյալ

- ՔԿՀ կողմից նախատեսել ոչ թե սոսկ որոշման կայացում, այլ եզրակացության տրամադրում, որը իրենում կպարունակի ազատման հարցի վերաբերյալ ՔԿՀ վարչակազմի հիմնավորված դիրքորոշումը
- Եզրակացությունը պետք է հիմնվի ոչ միայն դատապարտյալի անձնական գործում առկա ստատիկ տվյալների ու հանգամանքների վրա, այլ նաև հիմնվի հատուկ մասնագիտական կարծիքների վրա, որոնք պետք է լինեն պարբերական աշխատանքների արդյունք
- Նման մասնագիտական կարծիքներ ստանալու համար պետք է նախատեսել ՔԿՀ-ում դատապարտյալների հետ տարվող հոգեբանական ու սոցիալական պարբերական աշխատանքներ ու զրույցներ

Անկախ Հանձնաժողովի վերաբերյալ

- Անկախ հանձնաժողովների կազմում նախատեսել հոգեբանների, քրեագետների, սոցիալական աշխատակիցների, դասախոսների, առողջապահության ոլորտի մասնագետների
- Ստեղծել գործուն երաշխիքներ նշված անդամների անկախության ու ինքնուրույնության համար, միևնույն ժամանակ ապահովելով նախատեսված ֆունկցիաների առումով նրանց հաշվետվողականությունը
- Նախատեսել անկախ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից դատապարտյալի հետ հանդիպման ու զրույցի հնարավորություն
- Հստակեցնել անկախ հանձնաժողովների կողմից գնահատման ընթացքում դատապարտյալին նոր հարցեր ու պայմաններ առաջարկելու ընթացակարգը
- Անկախ հանձնաժողովի կողմից կայացված որոշումը ցանկացած պարագայում պետք է բողոքարկման ենթակա լինի
- Կայացված որոշումը պետք է պատճառաբանված ու դատապարտյալի համար հասկանալի լինի
- Մերժման դեպքում պետք է դատապարտյալը տեղեկացվի կրկին իր ազատման հարցը քննելու ժամկետի մասին

Դատարանի վերաբերյալ

- Ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցագործությունների դեպքում նախատեսվող պարտադիր համակարգի պարագայում դատարանում գործի ուսումնասիրությունն ու որոշման կայացումը պետք է կայացվի հեշտացված ընթացակարգով, այն է՝ ՔԿՀ ներկայացրած եզրակացության, Անկախ հանձնաժողովի որոշման ու դրա հիմքում դրված չափորոշիչների, ինչպես նաև դատախազի դիրքորոշման ուսումնասիրության հիման վրա
- Հայեցողական համակարգի դեպքում, ի հավելումն վերոնշյալ հիմքերի, դատարանը պետք է համապատասխան փորձագետ կամ մասնագետ հրավիրի՝ լրացուցիչ գնահատում իրականացնելու համար